
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՏՈՆԵՐԸ.
«ԽԱ ԲԸ-ՆԻՍԱՆ» (ԱՊՐԻԼԻ 1)

ԳԱԼՅԱ ԴԱՎԻԴՈՎԱ

Մեր օրերում կատարվող սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային փոփոխություններն իրենց արտահայտություններն են թողել նաև Հայաստանում բնակվող ասորիների հասարակական կենցաղի տարրերի վրա: Երկար տարիների շփումն ու համագործակցությունը հայերի հետ հանգեցնում է նրան, որ աստիճանաբար էթնիկականը, ավանդականը մոռացության է մատնվում: Ուստի դրանց գրառումն ու գիտական շրջանառության մեջ դնելն ունի ոչ միայն գիտաճանաչողական, այլև՝ գործնական նշանակություն: Մեր խնդիրն է ասորիների տոնաձիսական համակարգի ուսումնասիրման միջոցով բացահայտել նրանց էթնոմշակութային առանձնահատկությունները, ինչպես նաև մատնանշել այն ընդհանրությունները, որոնք առկա են, հատկապես՝ հայերի հետ:

Ինքնության խորհրդանիշների և արժեքների սեփական համակարգի առկայությունը թույլ է տալիս ասորիներին պահպանել իրենց էթնոմշակութային միասնությունը: Ասորիների էթնիկական ինքնագիտակցության էական տարրերից է ազգային հիշողությունը պատմական անցյալի, մասնավորապես՝ ծագման ընդհանրության մասին, հպարտությունը համաշխարհային մշակույթում ունեցած ներդրման համար: Ասորիների համախմբման ու ազգային պահպանման կարևոր գործոն է նաև տոնաձիսական համակարգի առանձին տարրերի պահպանման ձգտումն ու այդ ավանդույթների կենցաղավարումը թե՛ ընտանիքների, թե՛ համայնքի շրջանակներում:

Շատ հին տոնակատարություններ պահպանել են իրենց երբեմնի վարքագիծն առ այսօր, սակայն ժամանակի թելադրանքով որոշ տարրեր կորցրել են իրենց վաղեմի նշանակությունը և ձեռք բերել նոր իմաստ ու բովանդակություն: Դրանցից հիշատակելի են «Քուրսի դը Նինվի»-ն՝ (Նինվեի օրը)՝ կապված Նինվեի եպիսկոպոսության հետ, «Բաութա դը Նինվի»-ն՝ (ցանկություններ Նինվեին), որոնք շատ հանդիսավոր նշվում են հունվարին Մոսուլ քաղաքում (Իրաք)¹: Դամասկոսում, ուր գտնվում է Անտիոքի և Համայն Արևելքի ասորական ուղղափառ եկեղեցու նստավայրը, ամեն տարի նշվում են Նինվեին նվիրված տոները, որոնց մասնակցում են ողջ Արևելքի հավատացյալ ասորիները²:

Ասորական տոնացույցում հին տոների վերածնունդն ու նորովի կենցաղավարումը՝ Ապրիլի 1 («Խա բը-Նիսան»), Ասորի նահատակի օրը («Իոմ

¹ К. М а т в е е в. Один из древнейших народов мира.– Азия и Африка сегодня. М., 1965, № 9, с. 40.

² «Родина», Л., 1991, ' 2, с. 39.

սասադա այթուրայա»)՝ ի հիշատակ 1933 թ. օգոստոսի 7-ին Բրաքում տեղի ունեցած ողբերգության³, իրենց հերթին խթանում են ասորական էթնոսի համախմբումը:

1982–2000 թթ. մեր հավաքած դաշտային ազգագրական նյութերը [Արմավիր (Նոր Արտազերս), Կոտայք (Արզնի), Արտաշատ (Դվին և Դիմիտրով)] ցույց են տալիս, որ ասորիների տոնացույցը բազմաշերտ է և բացահայտում է վաղեմի ավանդույթներ, որոնց մի մասը բանավոր փոխանցվել է սերնդեսերունդ: Ասորի ժողովուրդը մինչև այժմ էլ պահպանել է քրիստոնեական տոների խումբը՝ Ս. Ծնունդ («Կյամթըդ Մաբան»), Տյառն ընդ առաջ («Մակդա պուճունյա»), Բարեկենդան («Փալու»), Ծառզարդար («Խոշիբրթ ուշանը»), Ս. Զատիկ («Բդա սուրա»), Համբարձում («Քյալուսուլակա»), Վարդավառ («Մուսարդը»), Խաղող օրհներ («Անվը բառախտա»):

Ասորական գյուղերում լայնորեն նշվում է այն սրբի հիշատակի տոնը, ում անունը կրում է գյուղի ուղղափառ եկեղեցին: Վերին Դվինում դա Ս. Մարեզն է՝ հունիսի 14-ին («Արբասար բի խզիրան»), Դիմիտրովում՝ Ս. Մար Կուրյակուսին՝ հուլիսի 28-ին («Հարիթմանյա բի թամնուզ»), Արզնիում՝ Ս. Մարիամի («Մաթ Մարյան», 28 օգոստոս- ըսրիթմանյա բի տաբբախ) օրը⁴:

Այս տոները սկսվում էին դրամ, մթերք հավաքելով: Կուլեկտիվ բնույթ կրող այս զոհաբերություններն ուղեկցվում էին ազգային երգ ու պարով, ծիսական ճոխ հյուրասիրությամբ՝ պահպանելով իրենց արխաիկ ոճը: Բաժանում էին մատաղ (նրդրա) և ազգային ուտեստներ: Արտասահմանից եկածները նույնպես իրենց ներդրումն են ունենում զոհաբերությունների ժամանակ: Գյուղական այս տոների շնորհիվ էլ պահպանվում են ներթնիկական և միջխմբային կապերը:

«Խա բը-Նիսան»-ը (նշվում է ապրիլի 1-ին): Այն բնության կենսական ուժերը կյանքի կոչող, զարթոնքի տոն է, նաև՝ սիրո, ուրախության, պտղաբերության տոն, որ բովանդակում է մեռնող ու հարություն առնող բնության խորհուրդը:

Շատ վաղ անցյալում ասորիները Նոր տարին («Բի Շիթա», բառացի թարգմանությամբ՝ տարվա գլուխ) նշել են 12–14 օր: Ասորեստանում այն նշում էին սեպտեմբերի (զլույլա) կեսերին՝ մոտ աշնան գիշերահավասարին: Այն նվիրված էր ասորական դիցարանի գլխավոր աստծուն՝ Աշշուրին⁵: Բարելոնում այն նվիրված էր իրենց գլխավոր աստված Մարդուկին, Հայաստանում՝ Վանատուրին:

Բարելոնի՝ Ասորեստանին ենթակայության ժամանակաշրջանում վերջինիս թագավոր Մինաբերիբը (Ք. ա. 705–680 թթ.)⁶ փորձեց արգելել բարելացիներին նշելու Նոր տարին: Սակայն, արդյունքում, ասորեստանցիներն

³ Նույն տեղում, էջ 43:

⁴ Գ. Դավիդովա. Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), տետր 2, 1990 (բանասաց՝ Վ. Բվանովա-Դավիդովա):

⁵ К. М а т в е е в. Новый год в Ассирии.– «Наука и религия». М., 1983, № 1, с. 61.

⁶ Նույն տեղում, էջ 62:

սկսեցին Նոր տարին նշել գարնանը, ճիշտ այնպես, ինչպես բաբելացիները: Ընդ որում՝ ապրիլի մեկին (Խա բը-Նիսան)՝ գարնանային գիշերահավասարի օրը: Հենց այդ ժամանակ է, որ, ըստ բաբելացիների պատկերացումների, երկնային աստված Մարդուկը լցվում է կենսական, ստեղծագործ ուժերով և նրա իշխանությամբ աստվածները հաղթում են մահվան ու ավերումի ուժին: Տոնի բոլոր 12 օրերը սրբազան էին համարվում, որոնց ընթացքում արգելվում էր պատժել երեխաներին, ստրուկներին, աշխատել, դատաստան տեսնել: Սրբազան գրքերից մեկը գրում է, որ դրանք «աներևակայելի ազատության օրեր էին, երբ համաշխարհային ողջ կարգը գլխիվայր էր շրջվում. ստրուկը տեր էր դառնում»⁷: Առաջին չորս օրը խաղացվում էին դրամաներ, միստերիաներ, տաճարներում ու հրապարակներում ընթերցվում էին պոեմներ, բանաստեղծություններ, պատմվում լեգենդներ, առասպելներ: Իսկ ապրիլի 4-ի՝ լույս 5-ի գիշերը կարդացվում էր աշխարհի ստեղծման «Էնում-էլիշ» առասպելը, որում նկարագրվում էր քառսի ու խավարի ուժերի դեմ Մարդուկի պայքարը և հաղթանակը: Այդ օրերին Հին Ասորեստանում ու Բաբելոնում խաղում էին նաև կրոնական դրամաներ (խորհրդածեսեր), որոնցում ներկայացվում էին Մարդուկ աստծո տառապանքները: Խորհրդածեսի ամենատարածված պոեմն այսպիսին էր. «Սև ուժերը» բռնում են Մարդուկին և նրան փակում ստորգետնյա թագավորության լեռան մեջ: Այնտեղ նրան հարցաքննում, տանջում են և արյամբ ողողում հագուստը: Ամուսնու երկար բացակայությունից անհանգստացած՝ Մարպանիտում աստվածուհին գնում է նրան որոնելու, երկար ճանապարհորդելուց հետո գտնում է ստորգետնյա թագավորությունը, որտեղ Մարդուկին պահում էին կալանքի տակ, և ազատում նրան:

Որոշ գիտնականներ համարում են, որ Մարդուկ աստծո տառապանքների մասին առասպելը հիմք է ծառայել Քրիստոսի տառապանքների մասին աստվածաշնչյան գրույցին: Վ. Ստրուվեն գրում է. «Յուրաքանչյուր ոք, ով կարդում է մեր կողմից շարադրված տեքստը, ականայից հիշում է Քրիստոսի տանջանքների մասին աստվածաշնչյան առասպելը: Այնտեղ նույնպես կա դատ-դատաստան, Քրիստոսի չարչարանք, ինչ-որ հանցագործ, որին պետք է մահապատժի ենթարկեն Աստծո հետ, և կին, որը սերտ կապ ունի նրա ճակատագրի հետ»⁸:

Տասներկուօրյա տոնի հինգերորդ օրը տոնակատարության մասնակիցները բերում են նավը, որը, ըստ նրանց պատկերացումների, խորհրդանշում է Աստծո՝ համաշխարհային օվկիանոսը լողանցելով ջրանցքին հասնելու, և ապա՝ անիվների վրա փոխադրված նույն նավով տոնական երթուղով դեպի «Երկնային աշխարհ»՝ Բաբելոնի սրբավայրը, «ուղևորվելու» պատմությունը: Դա սայլ-նավ է, որի անունով մինչ օրս էլ կոչվում է տոնը՝ Կառնավալ (անվանումը լատիներենին անցել է ասորերենից)⁹: Այն նշանավորում է հին տարվա ավարտը և նորի սկիզբը:

⁷ Г. Винклер. Вавилонская культура в ее отношении к культурному развитию человечества. М., 1913, с. 138.

⁸ К. Матвеев. Новый год в Ассирии, с. 62–63.

⁹ Նույն տեղում, էջ 62:

Տոնի ժամանակ դուրս են եկել փողոց, զվարճացել: Տոնակատարության ընթացքում ոչ մի օրենք չի գործել, ոչ մեկին չեն պատժել: Տոնը ավարտելու օրը թագավորը («մալքյա») մի օրով լքել է քաղաքը, իսկ նրան փոխարինողը եղել է նրա ծաղրածուն («մասխրանա»), որն էլ կառավարել է երկիրը: Ծաղրածուի «գահակալության շրջանն» անվանել են հիմարի («շիդանա») օր: Եվ այդ օրը համընկել է ապրիլի 1-ի հետ, որտեղից էլ առաջացել է ծիծաղի օրը¹⁰:

Թագավորին ժամանակավորապես «գահընկեց» էին անում, նրանից վերցնում էին թագավորության ասորիքուտները՝ թագն ու գավազանը: Գլխավոր քուրմը մտրակով խփում էր թագավորին, որպեսզի նա ծնկի գա սրբավայրում: Եթե թագավորը լաց էր լինում, ուրեմն նրա գահակալության հաջորդ տարին երջանիկ ու արգասաբեր էր լինելու, եթե ոչ՝ որպես թագավոր նրա իրավունքներն ավարտվում էին: Ուշագրավ է, որ թե՛ «հիմարի օրվա» գաղափարը, թե՛ «արքային գահընկեց անելու» արարողությունները հայոց մեջ մինչև XIX դարի վերջերը և XX դարի սկիզբը պահպանվել են Բարեկենդանի տոնական շարքում՝ իբրև զուգահեռներ ունենալով «թարս օրվա» գաղափարը և «Քրոսա գյալին» կամ «ռեսի դատավարություն» ծիսական խաղերը:

Այս տոնի հինավուրց ակունքների մասին է պատմում մեկ այլ գեղեցիկ լեգենդ: Ըստ որի՝ ասորական սիրո և պտղաբերության աստվածուհի Բշտարը մի օր խնդրում է իր եղբորը՝ Արնի Շիմշա աստծուն, որպեսզի նա օրհնի իր ամուսնությունը հասարակ հովվի՝ Թամուզի հետ: Կայացած ամուսնությունը բերում է իր արգասիքը. Բշտարի և Թամուզի ամուսնության շնորհիվ երկրի երեսին սկսվում է բերրիության շրջան: Այնպես է ստացվում, որ Թամուզին քշում են անդրաշխարհ: Բշտարը տխրում է սիրելիի համար, ուրախությունն ու բերրիությունը վերանում են երկրի երեսից: Լեգենդի համաձայն՝ բազմաթիվ շարչարանքներից հետո Թամուզը վերադառնում է անդրաշխարհից հենց ապրիլի 1-ին: Բշտարն ապրում է մեծ երջանկություն: Այս գեղեցիկ սիրո երջանկությունից երկրի երեսին ամեն ինչ ծաղկում է, պայծառանում: Տոնակատարության տասներկուերորդ օրն ավարտվում է հարսանիքով: Գարնան ավետաբերը՝ ապրիլի 1-ը, այսպիսով, համընկնում է ասորական Նոր տարվա հետ:

Հին Նոր տարուց անցել են հազարավոր տարիներ, բայց այսօրվա Նոր տարվա ծեսերի մեջ պահպանվել են շատ ասորիքուտներ, որոնք, իհարկե, շատ ձևափոխված են մեզ հասել:

Իրաքի Դոխուկ քաղաքում մինչև այժմ էլ ասորիները մեծ հանդիսավորությամբ նշում են Նոր տարին: Այստեղ կազմակերպում են կառնավալային շքեղ տոնախմբություններ: Մասնակիցները՝ մեծ ու փոքր, հագնում են տոնական զգեստներ, ինչպես իրենց վաղեմի նախորդները՝ ասորական թագավորների «տարազով, զենք ու զրահով», ազգային դրոշներով ու ծաղիկներով: Այս տոնը նրանք անվանում են Ակիտու¹¹: Ցավոք, ինչպես հայերի, այնպես էլ ասորիների մեջ, հատկապես՝ Հայաստանում ապրող, ներկայումս վերացել է դիմակահանդեսային մշակույթը:

¹⁰ Նույն տեղում, էջ 63:

¹¹ «Ассирийские новости», М., 2010, июнь, 1 23.

Ատրական ժամանակակից Նոր տարին ևս խիստ նմանություններ ունի հայոց տոնի հետ: Նրանում պահպանված են ավանդույթային Նոր տարվա շատ տարրեր: Մասնավորապես, այդ օրը յուրաքանչյուր ընտանիք ձգտում է ունենալ ճոխ սեղան՝ բազմազան խորտիկներով: Ընդունված է, որ մինչև վերջին պատառը պետք է մատուցել հյուրերին, ինչը խոսում է այն մասին, որ տոնական ուտեստը մատաղի գործառույթ է ունեցել: Ուստի սեղանից օգտվելը նաև այդ ցանկությունների իրականացմանը մասնակից դառնալն էր նշանակում: Տոնին միմյանցից նեղացածներն անպայմանորեն հաշտվում էին, միմյանց հետ անցկացնում տոնակատարության ողջ օրը: Երգում էին ազգային երգեր¹², պարում, ուրախանում, հաճելի զրույցներ անում: Տան դուռը այդ օրը չէին փակում: Առավոտ շուտ կարող էին սկսվել այցելությունները, եկած հյուրերն էլ ցանկալի էին:

Այս տոնական օրը նաև հմայություններ էին անում, ջերմություն հայցում եղանակից: Ուշագրավ էին առաջին օրվա հետ կապված գուշակությունները: Մասնավորապես շահագրգռված էին այն հարցով, թե ո՞վ կբացեր տան դուռը կամ ո՞վ կլինի առաջին հյուրը. եթե երեխա էր, ուրեմն այդ տարի տունը կհամալրվեր նոր անդամով, եթե կին էր, ուրեմն տարին տան տնտեսուհուն էր, տղամարդ էր՝ դաշտ ու հանդի գործերն էին հաջող լինելու: Փոխադարձ այցելությունների ժամանակ դատարկաձեռն չէին գնում, հետները վերցնում էին փոքրիկ նվերներ՝ խաղալիքներ («մրնդի դ թալթա»)՝¹³ տան երեխաների համար: Միմյանց շնորհավորելիս ասորիներն ասում են՝ «Ըի շիթողուն ավր բռիխա - Շնորհավոր Նոր տարի»՝ ակնկալելով լսել պատասխանը՝ «Մընդիտուն մույդայր - Ձեզ հետ»: Խմում էին և անում բարեմաղթանքներ՝

Օյա բրոխթա բիշիթոխուն,
Ախ պրքիլթ թինխսանը
Պաքիսիթուն մըդ տունթոխուն
Ախլիթուն բի խըդույթա¹⁴:

Թարգմ.՝

Շնորհավոր Ձեր Նոր տարին,
Ծաղկեք զարնան պես,
Ձեր բերքն ու բարիքն՝
Ուտեք ուրախությամբ:

¹² Ազգային երգ՝
Ըլ դա խըդույթթ ղիյան,
Ջըրըկըր բը բյումա գառիլուն
Յայը, բնաթը շուռիլուն
Բըրկադա ու բըզմարա:

Թարգմ.՝
Այս մեր մեծ ուրախությանը
Ծագեց արևը շողշողուն
Տղա, աղջիկ սկսեցին
Պարել ու երգել:

¹³ ԴԱՆ, տետր 3, 1990 (բանասաց՝ Վ. Իվանովա - Դավիդովա):

¹⁴ ԴԱՆ, տետր 5, 2010 (բանասաց՝ Ռախի Ավյան):

Տարեհացը (քյադրթ ըիշիթա), ինչպես այլ ազգերի, այնպես էլ ասորիների մոտ տարվա խորհրդանիշն է համարվում, և Նոր տարվա տոնակատարության ժամանակ էլ ամենազվիսավոր դերը հատկացվում է վերջինիս: Այն շաղախվում է կաթով, մեջը դնում են հատիկավոր որևէ բան կամ մանրադրամ, ուլունք, ոսկյա զարդ: Երեսը զարդարում են ընկույզով, չամիչով, նուշով: Տարեհացը խաչաձև չորս մասի էին բաժանում, հավանաբար, դրանք տարվա չորս եղանակներն էին: Շնորհաշատ տանտիկինները կարողանում էին լավ ձևավորել, զարդարել, նույնիսկ խմորի վրա գծում էին արև, լուսին, աստղ՝ ակնկալելով երկնքից ջերմություն, լույս, իսկ գալիք տարուց՝ բարեբերություն:

Տարեհացը կտրում էին Նոր տարվա գիշերը կամ հաջորդ օրը, երբ հավաքվում էր ամբողջ ընտանիքը: Տան մեծ տիկինը խաչակնքում էր, աղոթում «Շըմըդ բաբա, բրունա ռուխըդ կոչա, ամեն» («Հանուն հոր, որդու և սուրբ հոգու, ամեն») և կտրում այն՝ ըստ ընտանիքի անդամների թվի, նույնիսկ բաժին էին հանում տան կենդանիներին՝ շանը, կատվին, կովին և այլն: Ում բաժնի միջից դուրս գար դրված նշանը, նա համարվում էր տարվա երջանիկը, և այդ ընտանիքին եկող հաջողությունները նրանից էին սպասվում¹⁵: Պատրաստում էին նաև կաթով շիլա (շիլխալվա)՝ ընկույզով, դարչինով: Այն մատուցում էին սառը վիճակում: Պատրաստում էին կարմիր լոբով կարկանդակներ՝ «գյալը»: Մեղանին պարտադիր լինում էր բլդուրով փլավ՝ առատ սոխով ու ընկույզով: Աղցաններից՝ ավելուկը՝ ձեթով, դադած սոխով և կտրտած ընկույզով: Մեղանին լինում էին թարմ ու չոր մրգեր, անուշ աղանդներ՝ նուշի, ընկույզի, չամիչի, բոված սիսեռի խառնուրդով¹⁶:

Այժմ քաղաքներում (Մոսկվա, Ս. Պետերբուրգ, Կիև, Ռոստով, Արմավիր, Թբիլիսի, Երևան) ու գյուղերում (Արզնի, Դվին, Դիմիտրով, Նոր Արտազերս), որտեղ ասորիներ են ապրում, ապրիլի 1-ին հավաքվում են ողջ համայնքով ու նշում վերածնված Նոր տարին (Խա բը-Նիսա): Բազմաթիվ հյուրերի թվում լինում են և դրկից այլազգիներ:

ПРАЗДНИКИ АССИРИЙЦЕВ АРМЕНИИ:
«ХА БЭ – НИСАН» (1 АПРЕЛЯ)

ГАЛЯ ДАВИДОВА

Резюме

Ассирийский праздничный календарь очень богат и многослоен, отдельные праздники или ритуальные церемонии ассирийцев имеют свои параллели в армянском праздничном календаре. Полевые этнографические материалы, собранные в 1982–2000 гг. в густонаселенных ассирийцами районах Республики Армения – Армавир (с. Нор Артагерс), Котайк (с. Арзни), Арташат (с. Двин,

¹⁵ ԴԱՆ, տետր 2, 1986 (բանասաց՝ Վ. Վասիլևա-Ավյան):

¹⁶ Նույն տեղում (բանասացներ՝ Վ. Դավթյան, Ս. Վասիլյան):

с. Димитров), свидетельствуют о том, что многие традиционные праздники функционируют в прежнем виде до сих пор, отчасти благодаря чему сохраняются межэтнические и внутригрупповые связи в ассирийской среде. Праздник Ха бэ-Нисан – ассирийский старый Новый год– это праздник любви, плодородия, слагаемый вокруг легендарной истории любви между богиней Иштар и простым пастухом Тамузом, что символизирует также культ умирающей и воскресающей природы.

ASSYRIAN HOLIDAYS OF ARMENIA:
“KHA BE-NISAN” (APRIL 1)

GALYA DAVIDOVA

S u m m a r y

The Assyrian holiday calendar is very rich and multilayered. Its different holidays or ritual ceremonies have their parallels in the Armenian holiday calendar. It is based on the field ethnographic materials collected in 1982–2009 in those regions of the Republic of Armenia which are more inhabited by Assyrians – Armavir (v. of Nor Artagers), Kotayk (v. of Arzni), Artashat (v. of Dvin and v. of Dimitrov). Many traditional holidays have maintained the mode once they had till now. Due to them even nowadays the interethnic and intragroup relations in Assyrian environment are maintained. The holiday under discussion – Kha be Nisan – is the Assyrian old New Year. It is the holiday of love, fertility, made up on the legendary love story of the goddess of the same name Ishtary and an ordinary shepherd Tamouz. The story also symbolizes the worship of dying resuscitating nature.